Հավելված 3

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 3.

## *« Տարեցների համար հասանելի սոցիալական ծառայություններ»*

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Նպաստել համայնքում տարեցների և հատուկ կարիք ունեցող բնակիչների խնամքի, սոցիալ-հոգեբանական և առողջապահական ծառայությունների ապահովմանը, տեղերում՝ ապահովելով շրջիկ ծառայություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ծառայությունից օգտվող շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2021</td><td>2022</td><td>2023</td><td>2024</td><td>2025</td><td>2026</td></tr>
<tr><td>-</td><td>300</td><td>350</td><td>350</td><td>400</td><td>400</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Ծառայության մատուցման պարբերականություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ամսական այցելությունների թիվ յուրաքանչյուր համայնք</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2021</td><td>2022</td><td>2023</td><td>2024</td><td>2025</td><td>2026</td></tr>
<tr><td>-</td><td>1</td><td>1</td><td>1</td><td>1</td><td>1</td></tr>
<tr><td colspan="7">2. Ծրագրում ներառված համայնքների թիվ</td></tr>
<tr><td rowspan="3">Համայնքների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2021</td><td>2022</td><td>2023</td><td>2024</td><td>2025</td><td>2026</td></tr>
<tr><td>-</td><td>35</td><td>35</td><td>35</td><td>35</td><td>35</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Տարածքի բարեկարգում,<br>1.2 Կամավորների և մասնագետների հավաքագրում (բուժքույրի և սոցիալական աշխատող, հոգեբան),<br>1.3 Շահառու խմբերի կարիքների գնահատում,<br>1.4 Ծառայությունների փաթեթի մշակում,<br>1.5 Մեքնայի ձեռքբերում,<br>1.6 Անհարժեշտ պարագաների ձեռքբերում և տեղադրում,<br>1.7 Համագործակցության ձևավորում շահագրգիռ կողմերի հետ,<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Շահառուների բազայի ստեղծում,<br>2.2 Այցելությունների օրացույցի մշակում:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">15 մլն դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Ծրագրի հիմնական շահառուները | Հաշմանդամություն ունեցող երեխաներ |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2022-2026 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ախուրյան համայնքում ներկայումս բնակվում է 4600 տարեց և 1200 հատուկ կարիքներ ունեցող բնակիչներ: Նրանց մի մասը ապրում է միայնակ և ունի խնամքի կարիք, այդ թվում դեղորայքի, հատուկ խնամքի, սոցիալ-հոգեբանական աջակցության:<br><br>Համայնքում առկա չէ որևէ ծառայություն նշված կարիքների բավարարման համար, ինչը տարեցներին մղում է մեկուսացման, հանրային անպիտանիության զգացման, անտեսման, նվազում է իրենց սոցիալական ակտիվությունը, մոտիվացիան:<br><br>Միևնույն ժամանակ տարեցները չեն կարողնաում ապահովել իրենց լիարժեք առօրյան: Հնրավորություն չունեն հանդիպելու իրենց տարիքակիցների հետ, կազմակերպել իրենց ժամանցը: Չկան պայմաններ նրանց ժամանցը կազմակերպելու համար:<br>Համայնքում կան շատ տարեցներ, որոնք ունեն խնամքի և ուշադրության կարիք, որը չի պահանջում լուրջ բժշկական միջամտություններ, սակայն անհրաժեշտ են տարրական միջոցներ՝ խորհրդատվություն: |